ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ -2012

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի (ԵՃՇՊՀ) փորձնական ենթակառուցվածքային հավատարմագրման ինքնավերլուծության արտաքին գնահատումն իրականացրել է հետևյալ փորձագիտական խմբը.

1. **Էդուարդ Հակոբյան**, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ամբիոնի վարիչ /փորձագիտական խմբի ղեկավար/
2. **Վահան Սարգսյան**, գիտությունների թեկնածու, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայի վարիչ:
3. **Տիգրան Թովմասյան**, UNICEF Հայաստան
4. **Արևիկ Օհանյան**, Եվրասիա միջազգային համալսարան
5. **Ռիչարդ Լուիս**, Բարձրագույն կրթության ոլորտում անկախ խորհրդատու և Բարձրագույն կրթության հետազոտության և տեղեկատվության կենտրոնի (CHERI) մասնագետ Բրիտանիայում, Բաց համալսարան
6. **Հայկ Դավեյան**, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:
Խմբի աշխատանքներին մասնակցում էին գործընթացի քարտուղար-համակարգող՝ Անահիտ Ութմազյանը, թարգմանիչ՝ Ռ.Մինասյանը և սղագրող՝ Վ.Գյուլազյանը: Խմբի աշխատանքը մշտադիտարկվում էր ASIIN-ի ներկայացուցիչ Ռ.Շմիթթի, ՈԱԱԿ-ի տնօրեն Ռ.Թոփչյանի, ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության ծրագրի ղեկավար Մ.Այվազյանի կողմից:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2011թ. ապրիլի 1-ին Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը ՈԱԱԿ-ին դիմել է փորձնական ենթակառուցվածքային հավատարմագրման համար՝ ներկայացնելով դիմումը, լիցենզիայի պատճենները և համապատասխան հավելվածները:
ՈԱԱԿ-ն ուսումնասիրել է ներկայացված փաստաթղթերի փաթեթի համապատասխանությունը ՈԱԱԿ-ի պահանջներին՝ դիմումում նշված տվյալները, հավելվածները և համալսարանի կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:
Հիմք ընդունելով դիմումն ընդունելու մասին ՈԱԱԿ-ի որոշումը կազմվել և ստորագրվել է պայմանագիր հիմնադրամի և ԵՃՇՊՀ-ի միջև:
Կազմվել է հավատարմագրման գործընթացի ժամանակացույցը, որը համաձայնեցվել է հաստատության հետ և հաստատվել:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:
ԵԱՇՊՀ-ի ինքնավերլուծությունն իրականացրել է ռեկտորի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:
Ինքնավերլուծության վերաբերյալ ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով նշանակված հավատարմագրման գործընթացի թարտուղար-համակարգողի դրական կարծիքը ստանալուց հետո ՈԱԱԿ-ը կայացրել է որոշում այն ընդունելու մասին:
Փորձագիտական խումբն, ուսումնասիրելով հաստատության ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, փորձագիտական այցին նախապատրաստվելու համար լրացրել է նախնական գնահատման ձևաչափը՝ իրականացնելով ինքնավերլուծության նախնական գնահատում, պատրաստելով ուսումնասիրման ենթակա խնդիրների և հարցերի ցանկը, ինչպես նաև այն ստորաբաժանումները և թիրախային խմբերը, որոնց հետ հանդիպումների ժամանակ կարելի է պարզել հարցերի պատասխանները:

Նախնական այց

Գործընթացի համակարգողը, վերհանված ուսումնասիրման ենթակա հարցերի և խնդիրների հիման վրա, փորձագիտական խմբի հետ կազմել է այցի ժամանակացույց, որը համաձայնեցվել է հաստատության հետ համակարգողի և խմբի ղեկավարի կողմից իրականացված նախնական այցի ժամանակ /Հավելված 2/: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները թիրախային խմբերի հետ, ինչպես նաև փորձագիտական խմբի բաց և փակ հանդիպումները, փաստաթղթերի ուսումնասիրությունը, այցելությունները հաստատության ստորաբաժանումներ, ռեսուրսների ուսումնասիրությունը և այլն: Ներկայացվեց նաև լրացուցիչ ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի ցանկը:
Նախնական այցի ժամանակ այցելեցին փորձագիտական խմբի աշխատանքների համար նախատեսված անհրաժեշտ սարքավորումներով կահավորված սենյակը, ինչպես նաև հանդիպումների իրականացման համար դահլիճը:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցն իրականացվեց հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 4-ը:
Այցին նախորդող օրը փորձագիտական խմբի բոլոր անդամները հանդիպեցին ՈԱԱԿ-ում: Հանդիպման նպատակն էր միջազգային փորձագետի հետ կիսվել նախնական տպավորություններով, քննարկել և համաձայնեցնել այցի շրջանակներում ուսումնասիրման ենթակա խնդիրներն ու փաստաթղթերը, թիրախային խմբերի հանդիպումները, գնահատման շրջանակը:
Այցին մասնակցեց փորձագիտական խումբն ամբողջությամբ, ներառյալ համակարգողը, թարգմանիչը, դիտորդները:
Այցը սկսվել և ավարտվել է ռեկտորի հետ հանդիպումներով: Այցի ընթացքում փորձագիտական խումբն ունեցավ ժամանակացույցով նախատեսված բոլոր

հանդիպումները, որոնց մասնակիցներն ընտրել էին պատահականության սկզբունքով՝ հաստատության ներկայացրած ցուցակներից:

Այցի ժամանակ փորձագիտական խումբը ռեսուրսների դիտարկում և փաստաթղթերի ուսումնասիրություն է իրականացրել համալսարանի մի շարք ստորաբաժանումներում, որոնց ցանկը ներկայացված է / **Հավելվածներ 3 և 4/**:

Այցի ավարտին տեղի ունեցած խմբի փակ հանդիպման ժամանակ ամփոփվեցել են այցի հիմնական արդյունքները:

Գնահատումը կատարելիս փորձագիտական խումբը հետևել է «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգին» և Փորձաքննության անցկացման ձեռնարկում նկարագրված ընթացակարգին՝ իրականացնելով նախ չափորոշիչների, ապա նաև չափանիշների գնահատում: Կիրառվել է **«անբավարար»**, **«մասնակի բավարար»** և **«բավարար»** սանդղակը:

Փորձագիտական խումբը գնահատելիս օգտվել է հետևյալ սկզբունքներից.

- **անբավարար է**, եթե չափանիշի պահանջներին չի համապատասխանում, նման ձևով շարունակելն անթույլատրելի է, և հրատապ բարելավումների անհրաժեշտություն կա,
- **մասնակի բավարար է**, եթե չափանիշի ոչ բոլոր պահանջներին է համապատասխանում, սակայն իրատեսական է, որ, անհրաժեշտ բարելավումներ իրականացնելու դեպքում, ողջամիտ ժամանակահատվածում կարող է համապատասխանել,
- **բավարար է**, եթե համապատասխանում է չափանիշի պահանջներին, չնայած որ կարող է լինել բարելավման անհրաժեշտություն:

Փորձագիտական զեկույց

Այցի ավարտից հետո երկու շաբաթվա ընթացքում փորձագետները ներկայացրել են իրենց անհատական հաշվետվությունները: Դրանց հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է խմբի մյուս անդամների հետ:

Զեկույցի միայն փաստերի մասն ուղարկվել է համալսարանին՝ դիտողությունների և առաջարկությունների համար: Համալսարանը փորձագիտական խմբի ներկայացրած փաստերի վերաբերյալ դիտողություններ չի ունեցել:

Այնուհետև, փորձագիտական խումբը զեկույցի նախնական տարբերակին ավելացրել է չափանիշներին տրված իր գնահատականները և խորհրդատվությունները՝ նկատված բացթողումների վերացման համար:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

1.Առաքելություն և նպատակներ

ՉԱՓԱՆԻՇ 1. *Մասնագիտական ուսումնական հաստատության (ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համահունչ են հաստատության որդեգրած առաքելությանն ու նպատակներին և համապատասխանում են ՀՀ որակավորումների ազգային շրջանակին:*

ՉԱՓԱՆԻՇԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

«Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը կրթական ու գիտական պետական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղված է.

- ՀՀ-ում ճարտարապետաշինարարական կրթության և ուսումնառության կազմակերպմանը՝ միջին և բարձրագույն մասնագիտական, հետբուհական մակարդակներում՝ օրենքով նախատեսված կարգով և ուսուցման ձևերով,
- շարունակական կրթության կազմակերպմանը,
- գիտական հետազոտությունների իրականացմանը և գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը,
- հասարակությանը լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցմանը,
- ոլորտային որոշակի աշխատանքների կատարմանը:

Համալսարանը միակ ՄՈՒՀ-ն է տարածաշրջանում, որը մասնագետներ է պատրաստում շինարարության և ճարտարապետության բնագավառների համար:
Համալսարանի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են առաքելությանն ու ՀՀ որակավորումների ազգային շրջանակին:
Ներկայումս համալսարանն իր առաքելությունն իրականացնում է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև ԵՃՇՊՀ-ի կանոնադրության և նոր 2011-2016 թթ. ռազմավարական ծրագրի հիման վրա, որը հաստատվել է 2011թ. ապրիլի 29-ին՝ հիմք ընդունելով նախորդ՝ 2007-2010թթ. ծրագրի կատարման արդյունքները:
Ինչպես ցույց տվեցին այցի ընթացքում կատարված դիտարկումները համալսարանում առկա են առաքելության ու նպատակների գնահատման որոշ մեխանիզմներ, որոնց հիմնական նպատակը՝ ծրագրերի իրականացման գնահատումն է: Դրանց թվում են ԵՃՇՊՀ-ի հաշվետվությունները (Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի գործունեությունը 2006-2010 թթ. հրատարակվել և տարածվել է ԵՃՇՊՀ-ի շահակիցների շրջանակներում) և կառավարման տարբեր մարմիններում (ռեկտորատ և գիտական խորհուրդ) անցկացվող քննարկումները: Սակայն *մշակված չեն առաքելության ու նպատակների իրականացման արդյունքները գնահատելու հստակ մեխանիզմները և ընթացակարգերը:*
ԵՃՇՊՀ-ի առաքելության վերանայման գործընթացում մասնակցում են կառավարման մարմինները՝ համալսարանի կառավարման խորհուրդը, գիտխորհուրդը և ռեկտորատը: Փաստացի գործընթացից դուրս են մնացել այն ներքին (դասավանդողներ և ուսումնառողներ) և արտաքին շահեկիցները (նախագծային ինստիտուտներ,

շինարարական կազմակերպություններ և այլն), որոնք ընդգրկված չեն կառավարման մարմիններում: Չնայած այն փաստին, որ ինքնավերլուծության մեջ նշված է, որ քննարկումներ իրականացվում են նաև ուսանողական և ֆակուլտետային խորհուրդների նիստերում՝ սակայն, այցի ընթացքում ներքին շահակիցների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ քննարկումներն առնչվել են ընդամենը ուսումնական գործընթացի կազմակերպչական հարցերին: Ինչ վերաբերում է հարցումների արդյունքների վերլուծություններին, ապա ինքնավերլուծության ձևաչափում ներկայացված է ընդամենը մեկ ուսումնասիրություն, որի մասնագիտական որակը, կիրառված հետազոտական և վերլուծական մեթոդները գտնվում են պլանավորման փուլում և առայժմ բավարար չեն արդյունավետ եզրակացություններ ու ընդհանրացումներ կատարելու ներքին ու արտաքին շահակիցների իրական կարիքների ուսումնասիրության համար:

Համալսարանում գործող ռեկտորի հետ «կապի արկղը» կարևոր գործիք է մարզինալ վիճակում հայտնված շահակիցների ձայնը լսելի դարձնելու համար՝ գործընթացը հասանելի է շահակիցների համար, սակայն այն չի կարող հանդիսանալ համապարփակ գործիք կարիքների բացահայտման հարցում: Ներկայումս այդ գործընթացը գտնվում է պլանավորման փուլում և դեռևս չկա որևէ հաստատված մեխանիզմ միտված առաքելության, նպատակների և խնդիրների վերանայման հարցում արտաքին և ներքին շահակիցների կարիքների բացահայտմանը: Համալսարանական և արտահամալսարանական հարցումները դեռևս սաղմնային փուլում են, *մշակված չեն դրանց գնահատման չափանիշները և մեխանիզմները:*

ԵՃՇՊՀ-ը մշակել և հաստատել է (խորհրդի 2011թ. ապրիլի 29-ի նիստում) նոր ռազմավարական ծրագիր 2011-2016 թթ. համար, սակայն, ինչպես ցույց տվեցին ինքնավերլուծության զեկույցը և այցի արդյունքները, բացակայում է ռազմավարական ծրագրի գործողությունների իրականացման ժամանակացույցը: Հիմնվելով ինքնավերլուծության զեկույցում ներկայացված հիմքերի և այցի ընթացքում կատարված դիտարկումների վրա՝ կարելի է փաստել, որ ռազմավարական ծրագրի կազմման գործընթացում մասնակցել են միայն կառավարման մարմիններում ներգրավված ներքին և արտաքին շահակիցները: Ընդ որում, ռազմավարական ծրագրի իրականացման գնահատման հիմնական մեխանիզմն է՝ համալսարանի տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև ամբիոնների նիստերում, գիտական և ֆակուլտետների խորհուրդներում, ռեկտորատի նիստերում և կառավարման խորհրդում իրականացվող քննարկումները:

Հարկ է նշել, որ զեկույցում ներկայացված նախորդ ծրագրի իրականացման վերլուծությունը (վերջին 5 տարիների կտրվածքով) կատարված է համալսարանի գործունեության հետևյալ 3 հիմնական ուղղություններով՝ 1.Կրթական և գիտական ոլորտ, 2.Կառավարման համակարգ, 3.ֆինանսական և տնտեսական գործունեություն:

ԵՃՇՊՀ-ի 2006-2010թթ գործունեության վերլուծության հիման վրա առանձնացվել են դրա ուժեղ և թույլ կողմերը, բացահայտվել են արտաքին միջավայրի հնարավորությունները և սպառնացող վտանգները (ըստ ՈՒԹՀՎ վերլուծության ուղենիշների), որոնք կարող են ազդեցություն ունենալ ԵՃՇՊՀ-ի հետագա ռազմավարության վրա: Սակայն վերլուծությունը կրում է դեկլարատիվ բնույթ, նկարագրված *չեն տվյալների հավաքագրման աղբյուրները, ծրագրի իրականացման արդյունավետության գնահատման մեխանիզմները, թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղիները:*

Համալսարանը ՀՀ որակավորումների ազգային շրջանակին համապատասխան իրականացնում է բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրեր:

Ներկայացված են իրականացվող 22 մասնագիտությունների բոլոր կրթական աստիճանների համար ուսումնառության ակնկալվող արդյունքները՝ գիտելիք, հմտություն և կարողություն բաղադրիչների միջոցով, որոնց ընդհանրական բնութագրերը համապատասխանում են ՀՀ որակավորումների ազգային շրջանակին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Փորձագետների կողմից ձեռք բերված տվյալները բավարար էին եզրահանգելու, որ **չափանիշ 1-ը մասամբ է համապատասխանում ներկայացվող պահանջներին:**

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Անհրաժեշտ է.

1.1. *մշակել և հաստատել առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման հստակ ընթացակարգերը և մեխանիզմները;*

1.2. *մշակել առաքելության, նպատակների և խնդիրների վերանայման համար արտաքին և ներքին շահակիցների կարիքների բացահայտման հստակ մեխանիզմները, ինչպես նաև դրանց գնահատման չափանիշները;*

1.3. *մշակել և հաստատել ռազմավարական պլանի կազմման, մշտադիտարկման և վերանայման գործընթացների քաղաքականություն և դրա իրականացումը գնահատելու հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր:*

2. Կառավարում ու վարչարարություն

ՉԱՓԱՆԻՇ 2. *Հաստատության կառավարման համակարգն ապահովում է էթիկայի նորմերին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:*

ՉԱՓԱՆԻՇԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ինքնավերլուծության զեկույցի ուսումնասիրումը և այցի ընթացքում կատարված դիտարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ հաստատության կառավարման մարմինների կողմից որոշումներ կայացնելու գործընթացը հստակ կանոնակարգված է և համապատասխանում է էթիկայի նորմերին: Առկա մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները բավարար են կրթական ու այլ նպատակների իրականացման համար: ԵՃՇՊՀ-ի դասավանդողները և ուսումնառողներն ընդհանուր առմամբ բավարարված են որոշումների կայացման գործընթացներից, ինչը պարզվեց նրանց հետ հանդիպումների ընթացքում: Առկա մեխանիզմները և կանոնակարգերը միտված են կառավարման մարմնի որոշումների կայացման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավմանը:

Այցի ընթացքում կատարված դիտարկումները ցույց տվեցին, որ ուսումնառողների և դասավանդողների ներկայացուցիչներն իրազեկված են համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների մասին, ինչը պայմանավորված է դրանց ուսումնասիրության կիրառվող մեխանիզմներով.

• կառավարման մարմիններում քննարկումների իրականացում և հաշվետվությունների ներկայացում,
• ներքին աուդիտի իրականացում և արդյունքների հրապարակում,
• համեմատական վերլուծություններ այլ համալսարանների գործունեության հետ,
• ավարտական աշխատանքների պաշտպանության հանձնաժողովների հաշվետվությունների ներկայացում:

Կազմակերպչական կառուցվածքը ընձեռում է հնարավորություն ներքին և արտաքին շահակիցներին մասնակցելու որոշումների կայացման գործընթացներին՝ ներկայացուցչական մարմիններում ներգրավելու միջոցով:

Համալսարանն ունի պաշտոնապես հաստատված երկարաժամկետ ծրագիր: Ըստ ինքնավերլուծության՝ ռազմավարական ծրագրի խնդիրների կատարման համար բաժինների և ենթակառուցվածքների մակարդակով կատարվում է գործողությունների միջնաժամկետ պլանավորում՝ միտված ուսումնական տարում համալսարանի առաքելության և նպատակների իրականացմանը, սակայն համալսարանական մակարդակում *կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը բացակայում են:*

Ինչպես ցույց տվեցին դիտարկման արդյունքները համալսարանի ստորաբաժանումների գործող *կանոնակարգերը բարելավման և վերանայման կարիք ունեն:*

ԵՃՇՊՀ-ի կառավարման համակարգի գործունեության արդյունավետության վերաբերյալ հարցումներն իրականացվել են հիմնականում ուսանողական խորհրդի կողմից և քանի որ տվյալ ուղղությամբ հետազոտական գործունեությունը միայն վերջերս է սկսել ծավալվել, ապա դրա *իրականացման մեխանիզմների զարգացման կարիքն ակնհայտ է:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Հաշվի առնելով բարելավման առկա միտումները՝ կարելի է փաստել, որ չափանիշ 2-ը մասամբ է համապատասխանում ներկայացվող պահանջներին:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2. *1. պլանավորել և հստակեցնել միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների ծրագրերը և դրանց իրականացման ժամանակացույցը, ինչպես նաև մշակել և պաշտոնապես հաստատել այդ ծրագրերի գնահատման և վերանայման մեխանիզմներ;*

2. 2. վերանայել համալսարանի ստորաբաժանումների գործող կանոնակարգերը;

2.3. ստորաբաժանումների արդյունավետության բարձրացման նպատակով ներդնել աշխատակիցների ֆունկցիոնալ պարտականությունների և կոմպետենցիաների գնահատման ու վերանայման հստակ մեխանիզմները;

2.4.վերանայել կառավարման համակարգի գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմները

3. Որակի ներքին ապահովման համակարգ

ՉԱՓԱՆԻՇ 3. *«Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին» (ՈԱԵՉՈՒ/ESG) համապատասխան ԵՃՇՊՀ-ի ընդհանուր կառավարման համակարգի որակի ներքին ապահովման ենթակառուցվածքը:*

ՉԱՓԱՆԻՇԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2008 թվականի նոյեմբերի 29-ի գիտական խորհրդի թիվ 11 որոշման համաձայն՝ Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի կրթական

բարեփոխումների վարչության կազմում ստեղծվել է համալսարանի որակի ներքին ապահովման ենթակառուցվածքը՝ կրթության որակի գնահատման և վերահսկման բաժինը, որը գիտխորհրդի 2011թ. սեպտեմբերի 16-ի թիվ 02-09/11 նիստի որոշմամբ վերանվանվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման վարչություն»: Այն ունի բավարար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ իր առաքելությունն իրագործելու համար, ինչը հաստատվում է ինքնավերլուծության զեկույցում ներկայացված հիմքերով և այցի ընթացքում կատարված դիտարկումներով:

Որակի ապահովման համար հատկացվող ռեսուրսները, դրանց բաշխման սկզբունքներն ու ընթացակարգերը պարբերաբար քննարկվում են ռեկտորատի, գիտական խորհրդի և համալսարանի կառավարման խորհրդի նիստերում, որի արդյունքում կայացվում են համապատասխան որոշումներ (զեկույցի հիմքեր և այցի արդյունքներ): Սակայն որակի ապահովման կառույցի ռեսուրսներով ապահովվածության և օգտագործման արդյունավետության գնահատման գործընթաց դիտարկումների ընթացքում չի արձանագրվել: Չկա նաև այդ գործընթացի իրականացման պաշտոնապես *հաստատված քաղաքականություն և մեխանիզմներ:*

Ըստ ինքնավերլուծության զեկույցի վարչությունը համալսարանում գործում է անկախ, ինքնուրույն, ազատ է որոշումների կայացման հարցում և առաջարկությունները զեկուցագրերի տեսքով ուղղակիորեն ներկայացվում են համալսարանի ռեկտորին: Սակայն զեկույցում ներկայացված հիմքերը հակասում են վերոնշյալ պնդմանը, քանի որ համաձայն գործող կանոնակարգի՝ կառույցը հաշվետու է կրթական բարեփոխումների վարչության պետ-պրոռեկտորին: Տվյալ հակասությունը հաստատվեց նաև այցի ընթացքում որակի ապահովման վարչության աշխատակիցների հետ հանդիպման արդյունքում:

Ըստ ինքնավերլուծության զեկույցի և կատարված դիտարկումների՝ համալսարանն ունի գիտխորհրդի կողմից հաստատված որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, իսկ իրականացվող գործընթացները թափանցիկ են և հասանելի հանրությանը (տեղադրված են համալսարանի կայքում և տպագրված են որպես մեթոդական ցուցումներ): ԵՃՇՊՀ-ում իրականացվող կրթական ծրագրերի ռազմավարությունը և նպատակները պաշտոնապես հաստատված են և հանրությանը հասանելի:

Համալսարանում կատարվում են մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի և վերանայման գործառույթներ, որոնք հիմնականում բխում են տվյալ ֆակուլտետի/ամբիոնի ուսումնական գործընթացների իրականացման ժամանակացույցից: Այցի ընթացքում պարզվեց, որ որակի ապահովմանն առնչվող որոշակի գործառույթներ (ուսանողների բավարարվածության հարցումներ, գործատուների կարծիքների ուսումնասիրում և այլն) կրում են *ոչ պարբերական բնույթ՝ իրականացվում են ըստ անհրաժեշտության: Թերի է կազմակերպված վերոնշյալ գործառույթների վերլուծությունը և հետագա գործողությունների պլանավորումը:* Մինչդեռ դրանք հարկավոր է իրականացնել պարբերաբար՝ ըստ պաշտոնապես հաստատված ընթացակարգերի, նախանշված չափանիշների և ժամանակացույցի, վերլուծել ստացված արդյունքները՝ ի հայտ բերելով կրթական ծրագրերի ուժեղ և թույլ կողմերը, ինչը հիմք կծառայի ուսումնական գործընթացի պլանավորման և հետագա բարելավման համար:

Ինչ վերաբերում է կրթական ծրագրերի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և պարբերաբար վերանայման գործընթացներին, ապա դրանք նույնպես պետք է իրականացվեն *պաշտոնապես հաստատված ընթացակարգերի համաձայն,*

որոշակի պարբերականությամբ այլ ոչ թե ըստ անհրաժեշտության (ինչպես նշվում է զեկույցում), *և վերաբերվեն համալսարանի բոլոր կրթական ծրագրերին:*
Ընդ որում, որակի ապահովման կառույցը պետք է հետևի կամ համակարգի նշված գործընթացների իրականացումը, սակայն ինչպես ցույց տվեցին այցի արդյունքները ոչ բոլոր դեպքերում է ակնհայտ կառույցի դերակատարումը:
Համալսարանն ունի ուսումնառողների գիտելիքների գնահատման կանոնակարգված մեխանիզմներ, որոնք համահունչ են սահմանված գնահատման սկզբունքներին: Ուսումնառողների առաջադիմության վերաբերյալ տվյալների հավաքագրման, մշակման, համակարգման և վերլուծության գործընթացներն իրականացվում են ըստ հաստատված ձևաչափերի, հասանելի են ներքին և արտաքին շահակիցներին: Դա են վկայում զեկույցում ներկայացված հիմքերը և այցի արդյունքները:
Համալսարանում առկա են պրոֆեսորադասախոսական կազմի համալրման պաշտոնապես հաստատված կանոնակարգեր: ԵՃՇՊՀ-ն ունի քաղաքանություն և մեխանիզմներ ուսումնական գործընթացում բարձրորակ և երիտասարդ մասնագետներ ներգրավելու համար՝ մասնագիտական կոմպետենցիաների զարգացմանն աջակցելու նպատակով նրանց կցվում են փորձառու և առաջատար դասախոսներ, սահմանվում է աշխատավարձի հավելավճարներ և այլն:
ԵՃՇՊՀ-ի 22 մասնագիտությունների ուսումնական պլանները (հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով), դասախոսությունների համառոտագրերը, կուրսային նախագծերի և աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեղեկատուները, մեթոդական և այլ օժանդակ նյութերը նույնպես տեղակայված են կայքում և պարբերաբար թարմացվում են:
Այցի ընթացքում փորձագիտական խմբին ներկայացվեցին կրթական ծրագրերի իրականացման, գիտահետազոտական աշխատանքների կատարման, ռեսուրսների զարգացման և համալսարանի այլ տեսակի գործունեությունները լուսաբանող բազմաթիվ տեղեկատվական նյութեր և հրապարակումներ:
Փաստելով համալսարանի ներկա տեղեկատվական համակարգի առկայությունը՝ հարկավոր է կարևորել այն, որ այդ համակարգը անհրաժեշտ տեղեկատվություն պետք է ապահովի նաև որակի ինքնագնահատման (ներքին աուդիտի), գործունեության արդյունավետության գնահատման գործընթացների իրականացման համար: Ընդ որում, համապատասխան տեղեկատվական հոսքերը պետք է ձևավորվեն և մշակվեն ըստ համալսարանի արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշների, որոնք համալսարանը դեռևս չունի:

Համալսարանում մշակված չեն կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական հրապարակումները գնահատող մեխանիզմները, որոնք թույլ կտան վերահսկել ու հավաստիանալ, որ համալսարանի ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը թարմացված, անկողմնակալ և օբյեկտիվ է:

Ինչպես ցույց տվեցին այցի արդյունքները ԵՃՇՊՀ-ում կատարվում են որոշակի աշխատանքներ համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ, սակայն դրանք իրականացվում են հիմնականում ֆակուլտետային և ամբիոնային մակարդակներում և լիովին չեն համակարգվում որակի կառույցի կողմից, հետևաբար և չեն կրում համահամալսարանական վերահսկելի բնույթ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Հաշվի առնելով վերոնշյալը և զարգացման դրական միտումները՝ կարելի է փաստել, որ **չափանիշ 3-ը մասամբ է համապատասխանում ներկայացվող պահանջներին:**

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1.մշակել և պաշտոնապես հաստատել որակի ապահովման համար հատկացվող ռեսուրսների բաշխման, դրանց օգտագործման արդյունավետության գնահատման քաղաքականությունը և մեխանիզմները;

3.2. *վերանայել որակի ապահովման կառույցի վարչական ենթակայության սկզբունքները՝ ապահովելով նրա լիակատար կառուցվածքային անկախությունը և գործունեության թափանցիկությունն ու արդյունավետությունը;*

3.3. մշակել որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր;

3.4. մշակել և հաստատել կրթական ծրագրերի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և վերանայման ընթացակարգը և գնահատման մեխանիզմները;

3.5. մշակել համալսարանի արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշները;

3.6. մշակել տեղեկատվական հրապարակումները գնահատող մեխանիզմները և գործիքները;

3.7. մշակել որակի ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն և ընթացակարգեր, հստակ մեխանիզմներ և գործիքներ:

4. Արտաքին կապեր և միջազգայնացում

ՉԱՓԱՆԻՇ 4. *Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով միջազգայնացմանը:*

ՉԱՓԱՆԻՇԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Համալսարանն ունի երկու հիմնական ստորաբաժանում, որոնք զբաղվում են միջազգայնացման խնդիրներով, դրանք են՝ միջազգային կապերի ու արտասահմանցի սովորողների վարչությունը և միջազգային գիտակրթական համագործակցության բաժինը: Նշյալ երկու ստորաբաժանումների գործունեությունը նպատակաուղղված է 2011 թ. ընդունված Երևանի Ճարտարապետության և շինարարության համալսարանի 2011-2016թթ. ռազմավարական ծրագրում նախանշված արտաքին քաղաքականության իրականացմանը: Կառույցներն ունեն բավարար ռեսուրսներ և կարողություն այդ քաղաքականության իրականացման համար: Դրա վկայությունն են համալսարանում իրականացվող տարբեր միջազգային նախագծերը, համագործակցության պայմանագրերը, միջազգային շնորհանդեսներն ու գիտաժողովները և այլն:

Հատկանշական է, որ վերոնշյալ կառույցները վերջին երեք տարիների ընթացքում իրականացրել են համալսարանի միջազգայնացմանը նպաստող լայնածավալ աշխատանքներ առաքելությանը և ռազմավարական նպատակներին համահունչ՝ կնքվել են բազմաթիվ միջազգային համագործակցության պայմանագրեր, որով կարգավորվել է արտերկրյա համալսարանների միջև երկկողմ և բազմակողմ համագործակցությունը:

Շնորհիվ վարած արտաքին քաղաքականության համալսարանում 2006-2010թթ. ընկած ժամանակահատվածում ապահովվել է արտերկրներից ուսման նպատակով ժամանած ուսանողների թվաքանակի կայունությունը, ինչպես նաև միջազգային համագործակցությանն ուղղված միջոցառումների հաճախականությունը: Մասնավորապես, ինքնավերլուծության զեկույցի համաձայն օտարերկրյա ուսանողների տարեկան միջին թիվը կազմել է մոտ 300 ուսանող, այս տարի սովորում են նաև ֆրանսիական համալսարանների ուսանողներ, իսկ մեկ տարում անցկացրած միջոցառումների միջին թիվը՝ մոտ 30:

Առավել նկատելի ձեռքբերումներն են արձանագրվել միջազգային կրթական և մշակութային դրամաշնորհային տարբեր ծրագրերի շրջանակներում (Տեմպուս, Բաց հասարակության ինստիտուտ և այլ) կատարված բովանդակային փոփոխությունները, ինչպես նաև այդ ծրագրերի շրջանակներում իրականացված ուսանողների, դասախոսների, վարչական աշխատակազմի փոխանակումն ու վերապատրաստման գործընթացները:

Միջազգային համագործակցությունների արդյունքում ստեղծվել են մի շարք մասնագիտական լսարաններ և լաբորատորիաներ, ինչը հաստատվեց այցի ընթացքում:

Համալսարանը վարում է ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի շարժունությանը նպաստող քաղաքականություն: Մասնավորապես՝ միջազգային համագործակցությունների շրջանակներում կազմակերպվում են օտար լեզվի դասընթացներ, որոնք նպաստում են շարժունության հնարավորությունների ընդլայնմանը:

Առանձնահատուկ հարկավոր է նշել Ֆրանսիայի մշակույթի և հաղորդակցության նախարարության կողմից ԵՃՇՊՀ-ի «Ճարտարապետություն և դիզայն» մասնագիտության շրջանավարտներին տրվող դիպլոմի ճանաչումը:

Սակայն, ըստ ինքնավերլուծության, ինչը պարզվեց նաև այցի ընթացքում, որոշ պայմանագրեր չեն գործում: Պայմանագրերի չգործելու վերաբերյալ համապատասխան վերլուծությունը բացակայում էր, սակայն այցի ժամանակ պարզ դարձավ, որ հիմնական պատճառը ծրագրերի կոորդինացման համար երկկողմ մարդկային ռեսուրսների սակավությունն է:

Չնայած, ԵՃՇՊՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտում դրական փորձի առկայությանը, անհրաժեշտ է նշել, որ ոչ բոլոր մասնագիտություններն են համաչափ ընդգրկված:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Հաշվի առնելով տվյալ ուղղությամբ կատարված աշխատանքները և զարգացման միտումները՝ փորձագիտական խումբը եզրահանգեց, որ **չափանիշ 4-ը մասամբ է համապատասխանում ներկայացվող պահանջներին:**

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

4.1. վերանայել միջազգայնացման քաղաքականությունը, որը կնպաստի համալսարանի բոլոր մասնագիտությունների հավասարաչափ միջազգայնացմանը, ինչպես նաև մշակել դրա գնահատման չափանիշները և վերանայման ընթացակարգերը;

4.2. մշակել համապատասխան մեխանիզմներ՝ ապահովելով այդ գործընթացում ուսումնառողների և դասավանդողների առավել մեծ ներգրավվածությունը:

5. Ուսումնառողներ

ՉԱՓԱՆԻՇ 5. *Կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ն ուսումնառողներին տրամադրում է խորհրդատվական և աջակցության ծառայություններ:*

ՉԱՓԱՆԻՇԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԵՃՇՊՀ-ում ուսումնառողների ընդունելության և մրցույթի իրականացման գործընթացներն իրականացվում են դիմորդների ընդունելության կարգերին համապատասխան, որոնց անցկացման քաղաքականությունն ու ընթացակարգերը հաստատվում և վերանայվում են ՀՀ ԿԳՆ-ի կողմից:
Ինչպես ցույց տվեցին այցի դիտարկումները համալսարանն իրականացնում է լայնածավալ միջոցառումներ ուղղված հնարավոր դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը՝ հրատարակվում և լրատվական բաժնի միջոցով հրապարակվում են զանազան PR նյութեր, որտեղ նշվում են ՀՀ Կառավարության կողմից հաստատված մասնագիտությունները, ընդունելության համար սահմանված տեղերն ու քննությունները: Նշված նյութերը տեղադրվում են նաև համալսարանի կայքում:
Դիմորդների համար համալսարանում կազմակերպվում են անվճար խորհրդատվական աշխատանքներ և լրացուցիչ դասընթացներ մի շարք առարկաներից (մաթեմատիկա, ֆիզիկա, գծագրություն և նկարչություն, այդ թվում օտար լեզուներով) Երևանի և ՀՀ տարբեր մարզերի հանրակրթական դպրոցներում:
Սակայն կատարված դիտարկումները ցույց տվեցին, որ իրականացվող դասընթացների արդյունավետության վերլուծությունները և գնահատումները, ինչպես նաև ներկայացված բարելավման ծրագրերը հիմնավորման կարիք ունեն, քանի որ ինքնավերլուծության մեջ, որպես դրանց հիմքերն արտացոլող փաստաթղթեր ներկայացված են մի շարք քաղվածքներ և պայմանագրեր, որոնցում արդյունավետության վերլուծության, գնահատման փաստեր չեն բացահայտվել:
Ինքնավերլուծության զեկույցի ուսումնասիրման և այցի ընթացքում կատարած դիտարկումները ցույց տվեցին, որ ԵՃՇՊՀ-ն ուսումնառողներին տրամադրում է խորհրդատվական և աջակցության ծառայություններ, ունի լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների կազմակերպման հնարավորություններ ու ժամանակացույց: Պարզվեց նաև, որ ամբիոնների պատասխանատուներն, ըստ հաստատված ժամանակացույցի, իրականացնում են ուսումնառությանը նպաստող ընթացիկ խորհրդատվություններ:
Սակայն գործընթացը կանոնակարգված չէ, մշակված չեն նաև արդյունավետության գնահատման հիմնավորումները բավարար չեն *լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների կազմակերպումը և իրականացումը գնահատող մեխանիզմները, որոնք թույլ կտան բարելավել դրանց անցկացման արդյունավետությունը:*
Հետագայում նախատեսվում է ուսումնառողներին կողմնորոշելու և օժանդակելու նպատակով դեպարտամենտներին կից ստեղծել խորհրդատվական մարմիններ:
Ինքնավերլուծության զեկույցի ուսումնասիրման և այցի ընթացքում կատարած դիտարկումների արդյունքում փորձագիտական խումբը եզրահանգեց, որ ԵՃՇՊՀ-ում ուսանողների կողմից բարձրացված հարցերի լուծման ընթացքը գտնվում է ռեկտորատի և դեպարտամենտների պատասխանատուների անմիջական հսկողության տակ: Սակայն օժանդակություն և ուղղորդում ստանալու համար ուսումնառողների վարչական

աշխատակազմին դիմելու ժամանակացույցը և ընթացակարգը բացակայում էին: Դրանք ներկայումս մշակման փուլում են:
Այցի ընթացքում պարզվեց նաև, որ ԵՃԾՊՀ-ում չի գործում ուսումնառողների կարիերային նպաստող կենտրոն/ծառայություն, որը նույնպես ներկայումս մշակման փուլում է: Կարիերայի կենտրոնի բացակայությունը հանգեցրել է ուսումնառողներին աշխատատեղերով ապահովելու հարցում կանոնակարգված աջակցության բացակայությանը, ինչը, ներկայումս, մասնակիորեն լրացվում է վարչական կազմի և մասնագիտական ամբիոնների գործունեությամբ: Բացի այդ, ԵՃԾՊՀ-ի այցելության և հանդիպումների արդյունքում հաստատվեցին տարբեր կազմակերպությունների հետ համալսարանի կայուն կապերի առկայությունը, ինչը էապես նպաստում է ուսումնառողների կարիերային:
Ըստ զեկույցի և այցի արդյունքների՝ ուսումնառողների ներգրավվածությունը կառավարման գործընթացներում ապահովվում է համալսարանի կանոնադրությամբ:
ԵՃԾՊՀ-ի կառավարման գործընթացին ուսումնառողների ներգրավվածությանը նպաստող քաղաքականությունը և ընթացակարգերն առկա են, սակայն *բացակայում են մեխանիզմները*, որոնք կձևավորեն կապեր կառավարման մարմիններում ներգրավված ուսանողների և ակտիվ ուսանողության միջև, ինչով և կապահովվի նրանց ավելի ակտիվ ներգրավվածությունը կառավարման գործընթացներին:
ԵՃԾՊՀ-ն ունի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների ներգրավվածության ապահովման մշակված ռազմավարություն:
Զեկույցում, որպես գերակա հետազոտություններում ներգրավվածությունն արտացոլող հիմք, ներկայացված է բազային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում ներգրավված ուսանողների վերաբերյալ տեղեկանքը՝ ընդամենը 67 ուսումնառող 2008-2010թթ. կտրվածքով: Ընդ որում, ինչպես պարզաբանվեց այցի ընթացքում, նշված ցուցակում ընդգրկված են հիմնականում մագիստրոսական թեզեր կատարող ուսումնառողները:
Համալսարանում չկան հստակ մեխանիզմներ, որոնք կապահովեն գերակա գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների ավելի լայն շրջանակի ներգրավվումը:
Ուսումնառողների ներգրավումը հաստատության գործունեության գնահատման գործընթացներում պայմանավորված է համալսարանի կանոնադրությամբ, սակայն այն չի ընդգրկում գործունեության բոլոր ուղղությունները, իրականացվում է ըստ անհրաժեշտության (դասախոսների ընտրություն, գիտական կոչումների շնորհում) և չի կրում պարբերական բնույթ:
Համալսարանում բացակայում է հաստատության գործունեության գնահատման գործընթացներում (ներառյալ որակի ապահովման) ուսանողների ներգրավվման մեխանիզմները և ընթացակարգերը, հստակեցված չեն այն գործառույթները, որոնցում ուսումնառողների մասնակցությունը պարտադիր է: Բացի այդ, ուսումնառողներին անհրաժեշտ է պարբերաբար տեղեկացնել հաստատության գործունեության գնահատման գործընթացներում նրանց մասնակցության անհրաժեշտության և գործառույթների մասին:
Ակնհայտ է, որ այդ գործընթացներում իրազեկված և պատրաստված ուսումնառողի մասնակցությունը կլինի շատ ավելի արդյունավետ և գիտակցված:
Ուսումնառողների իրավունքների պաշտպանության գործառույթներն իրականացնում է ուսանողական խորհուրդը: Ըստ ինքնավերլուծության զեկույցի՝ ուսումնառողների 10-15%-

ը ընդգրկված է ուսանողական խորհուրդների և նրա առանձին ենթաբաժինների կազմում: Նրանք պարբերաբար մասնակցում են համալսարանական ուսանողական խորհրդի և նրա ենթաստորաբաժանումների նիստերին: Հանդիպումների արդյունքում հաստատվեց ուսանողների սակավ ներգրավվածությունը տվյալ գործընթացներին:
Նախատեսվում է ԵՃՇՊՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության շրջանակներում մշակել խնդիրների բացահայտմանն ուղղված պարբերաբար իրականացվող հարցման մեխանիզմ: Պլանավորման փուլում են ուսանողների իրավունքների պաշտպանության մի շարք այլ գործընթացներ՝ այդ թվում առանձին ենթակառույցի ստեղծումը:
Այցի ընթացքում բացահայտվեց որակի ապահովման գործընթացների մասին ուսանողների ցածր տեղեկացվածությունը, ինչը պայմանավորված է նրանով, որ ուսումնառողների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում *չի կրում պարբերական և կանոնակարգված բնույթ:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Հաշվի առնելով ուսումնառողներին աջակցություն և ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ իրականացնելու մի շարք գործընթացների առկայությունը, ինչպես նաև դրանց բարելավման ուղղությամբ գործողությունների պլանավորումը՝ փորձագիտական խումբը եզրակացրեց, որ **չափանիշ 5-ը մասամբ է համապատասխանում ներկայացվող պահանջներին:**

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

5.1.մշակել դիմորդների մասնագիտական կողմնորոշման և իրականացվող նախապատրաստական դասընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմները;

5.2.մշակել լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների կազմակերպման ընթացակարգը և իրականացումը գնահատող մեխանիզմները;

5.3.մշակել կառավարման գործընթացներին ուսանողների ավելի ակտիվ ներգրավվածությունն ապահովող մեխանիզմները;
5.4. մշակել գերակա գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների ավելի լայն շրջանակի ներգրավվումը ապահովող հստակ մեխանիզմները;
5.5.մշակել հաստատության գործունեության գնահատման գործընթացներում ուսանողների ներգրավվման մեխանիզմները և ընթացակարգերը, հստակեցնելով այն գործառույթները, որոնցում ուսումնառողների մասնակցությունը պարտադիր է;
5.6. մշակել և պաշտոնապես հաստատել որակի ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավվման հստակ մեխանիզմները և ընթացակարգերը:

6. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ

ՉԱՓԱՆԻՇ 6. *Մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներն իրականացնելու համար ՄՈՒՀ-ն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:*

ՉԱՓԱՆԻՇԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2010 թվականին գիտխորհրդի կողմից հաստատվել է պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների մրցույթով տեղակալման կարգը, որի շնորհիվ վերափոխվել են պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի հավաքագրման մեխանիզմները՝ ապահովելով մրցակցային և թափանցիկ համակարգ:
Թափանցիկությունն ապահովելու նպատակով ԵՃՇՊՀ-ը ԶԼՄ-ների միջոցով հայտարարություն է տարածում թափուր աշխատատեղերի և ընտրության պայմանների վերաբերյալ: Ներկայացված կանոնակարգը և ներքին շահակիցների հետ հանդիպումների արդյունքները թույլ տվեցին եզրահանգելու, որ ԵՃՇՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի հավաքագրման մեխանիզմներն առկա են և կիրառելի: Սակայն ԵՃՇՊՀ-ում *տարբերակված չեն մասնագիտական պահանջները*, ինչը մեծացնում է ընտրության ժամանակ կողմնակալ մոտեցումների հնարավորությունը:
Ինչպես ցույց տվեցին կատարված դիտարկումները ԵՃՇՊՀ-ն արդյունավետ քաղաքականություն է վարում ոլորտի լավագույն մասնագետներին դասավանդման գործընթացում ներգրավվելու ուղղությամբ, որի շնորհիվ համալսարանը հիմնականում համալրված է մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող պրոֆեսորադասախոսական կազմով:
Ըստ զեկույցի և այցի դիտարկումների՝ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակները, դասավանդողներին ներկայացվող ընդհանրական պահանջները հիմնականում դիտարկվում են մրցույթների ժամանակ, դասալսումների և ուսանողների կողմից իրականացվող գնահատումների միջոցով: Ընդ որում, ուսանողների, դասախոսների և ներքին այլ շահեկիցների հետ հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների շրջանակներում անցկացվող հարցումներն ու գնահատումները հիմնականում իրականացվել են ինքնավերլուծության ընթացքում և *չեն կրում պարբերական և կանոնակարգված բնույթ:*
Այցի ընթացքում ներքին շահակիցների (ամբիոնների վարիչներ, դասախոսներ և այլն) հետ հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման առումով որոշակի աշխատանքներ իրականացվում են, սակայն դրանք թերի են ներկայացված ինքնավերլուծության մեջ: Որպես վերջին երեք տարիներին դասավանդողների կատարելագործման գործընթացի վերլուծություն՝ ներկայացված է տարբեր վերապատրաստման ծրագրերի մասնակցած դասախոսների ցանկը, սակայն բացակայում է այդ ծրագրերի արդյունավետության վերաբերյալ վերլուծությունը: *Թերի ներկայացման պատճառներից կարող է լինել ոչ համակարգված աշխատանքը և վերլուծական կարողությունների պակասը:*
Ռազմավարական նպատակների իրականացման համար համալսարանն ունի անհրաժեշտ վարչական և օժանդակ աշխատակազմ, սակայն բացակայում են վարչական և օժանդակ կազմի հստակ և հաստատված *պաշտոնների անձնագրերը կամ գործառույթներն արտահայտող որևէ այլ փաստաթուղթ*, ինչպես նաև *գործունեության որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Հաշվի առնելով վերոնշյալը և զարգացման դրական միտումները՝ կարելի է փաստել, որ **չափանիշ 6-ը մասամբ է համապատասխանում ներկայացվող պահանջներին:**

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

6.1. վերանայել պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման կարգը, հստակեցնելով մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները;

6.2. մշակել և պաշտոնապես հաստատել պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման, խրախուսման, վերապատրաստման քաղաքականությունը և ընթացակարգերը, ինչպես նաև այդ գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմները;

6.3. մշակել և պաշտոնապես հաստատել պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման քաղաքականությունը և ընթացակարգերը;

6.4. մշակել և պաշտոնապես հաստատել վարչական և օժանդակ կազմի աշխատակիցներին ներկայացվող պահանջներն ու աշխատանքային գործունեության ոլորտները, նրանց գործունեության որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը:

7. Մասնագիտության կրթական ծրագրեր

ՉԱՓԱՆԻՇ 7. *Մասնագիտությունների կրթական ծրագրերը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս, համապատասխանում են ազգային պահանջներին, ուսումնառողների և այլ շահակիցների պահանջմունքներին և համոզիչ են բովանդակային առումով:*

ՉԱՓԱՆԻՇԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ ներկայացված զեկույցի և այցի դիտարկումների՝ ԵՃՇՊՀ-ի կրթական ծրագրերի մշակման գործընթացում ներգրավվել են մասնագիտական ամբիոնների աշխատանքային խմբերը, արտաքին և ներքին շահակիցները: Տվյալ աշխատանքներում հաշվի են առնվել պրոֆիլային կազմակերպությունների առաջարկությունները և համապատասխան ոլորտներում հայտնի մասնագետների աշխատանքային փորձը, ինչպես նաև օտարերկրյա ուսումնական հաստատությունների համանման կրթական ծրագրերի ուսումնական պլանները և դասավանդման փորձը: Մասնագիտությունների կրթական ծրագրերը համապատասխանում են ՀՀ որակավորումների ազգային շրջանակ պահանջներին, դրանցում հստակ ներառված են շրջանավարտների ընդհանուր և հատուկ մասնագիտական գիտելիքները, ունակություններն ու կարողությունները:

Սակայն ինչպես պարզվեց ինքնավերլուծությունից և այցի դիտարկումներից ԵՃՇՊՀ-ի կրթական ծրագրերի դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները վերանայվում են յուրաքանչյուր կիսամյակ: Դրանց այդքան հաջախ վերանայումը վկայում է, որ որոշակի կրթական ծրագրեր ի սկզբանե թերի են կազմված: Հնարավոր պատճառներից կարող է հանդիսանալ, մասնավորապես՝ բենչմարքինգի բացակայությունը կամ էլ դրա թերի իրականացումը: Զեկույցում ներկայացված բենչմարքինգի իրականացման օտարերկրյա համալսարանների ցուցակը չափազանց մեծ է, որպեսզի արդյունքները լինեն վստահելի և արդյունավետ, հիմնավորված չէ նաև դրանց ընտրությունը:

Բացահայտված չեն նաև դասավանդման նյութերի և ռեսուրսների առկա վիճակի գնահատման մեխանիզմները, դրա իրականացման պարբերականությունը և գնահատման չափանիշները:

ԵՃՇՊՀ-ում, որպես շահակիցների կարիքները բացահայտող մեխանիզմներ, ներկայացված են ֆակուլտետների խորհուրդների և ամբիոնների նիստերի քննարկումները, որտեղ առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կրթական բարեփոխումների վարչությունը ծրագրերի բարելավման առաջարկություններ է ներկայացնում ռեկտորատ և գիտական խորհուրդ: Բացի այդ, շահակիցների կարիքները բացահայտող մեխանիզմ է հանդիսանում ուսանողության և գործատուների շրջանում անցկացվող հարցումները, որոնք թույլ են տալիս վեր հանել հետագա հնարավոր բարեփոխումների ուղղությունները: Սակայն տվյալ չափանիշի պահանջվող հիմքերի հիմնավորումների ուսումնասիրությունը և հանդիպումները բացահայտեցին, որ *գործատուների հարցման մեխանիզմները դեռևս մշակման ընթացքում են:*

Տարբեր խմբերի հետ հանդիպումներից պարզաբանվեց նաև, որ համալսարանում աշխատում են բավականին մեծ թվով արտաքին համատեղությամբ աշխատող դասախոսներ և վարչական աշխատողներ (ամբիոնի վարիչներ), ինչը որոշակի առումով կոմպենսացնում է ԵՃՇՊՀ-ում արտաքին շահակիցների կարծիքների մշտադիտարկման մեխանիզմների բացակայությունը:

Ըստ զեկույցի և այցի դիտարկումների համատեղությամբ աշխատողները կազմում են պրոֆեսորադասախոսական կազմի մոտ 34%-ը:

Համաձայն ինքնավերլուծության զեկույցի և այցի դիտարկումների՝ համալսարանը մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման և դրանց արդյունավետության գնահատմանը ներգրավում է ուսումնառողներին և արտաքին շահակիցներին՝ հիմնվելով աշխատաշուկայի պահանջների, գիտատեխնիկական առաջընթացի և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքների վրա:

Ըստ զեկույցի և այցի արդյունքների *ԵՃՇՊՀ-ն փաստացի չունի կրթական ծրագրերի մշտադիտարկման հստակ մեխանիզմներ* և դրանց վերանայումը կատարվում է ըստ անհրաժեշտության, ուսումնական տարվա վերջում՝ կախված կրթական ծրագրում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու և ճշգրտումներ ու լրամշակումներ անելու առաջարկություններից:

ԵՃՇՊՀ-ում ուսումնառողների գնահատման գործող քաղաքականության համաձայն՝ գնահատումն իրականացվում է ինչպես վերջնական, այնպես էլ միջանկյալ քննությունների, ստուգարքների և ատեստավորման միջոցով: Սակայն *գործող գնահատման համակարգը նպատակաուղղված չէ գնահատելու ուսանողների ձեռք բերված գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանությունը դասընթացի կամ կրթական ծրագրի նախանշված կրթական ելքային արդյունքներին:* Ըստ ինքնավերլուծության ուսանողների գնահատման քաղաքականությունը վերանայվում է ըստ անհրաժեշտության, սակայն *քաղաքականության վերանայման հիմքեր ներկայացված չեն:*

Գնահատման գործընթացի ակադեմիական ազնվությունն ապահովելու համար քննություններն անցկացվում են քննական հանձնաժողովներով: Այցի ընթացքում պարզվեց, որ ԵՃՇՊՀ-ի ուսանողական խորհուրդը գործող կանոնադրության շրջանակներում ինքնուրույն իրականացնում է քննաշրջանի մշտադիտարկում, իսկ արդյունքները ներկայացվում են անմիջապես ԵՃՇՊՀ-ի ռեկտորին, ինչն ըստ

փորձագիտական խմբի կարծիքի վկայում է համալսարանական ուսխորհրդի բարձր ինքնակազմակերպչական ունակության և պատասխանատվության մասին, սակայն, իրականացվող այս գործողությունները *չեն կարող լիակատար ապահովել գործընթացի ակադեմիական ազնվությունը:*

ԵՃՇՊՀ-ն ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ ուղղված այլ կրթական ծրագրերի հետ իրականցվող մասնագիտությունների կրթական ծրագրերի համադրելիությունն ապահովելու նպատակով. օրինակ՝ «Ճարտարապետություն և դիզայն», «Անշարժ գույքի կառավարում և կազմակերպում» մասնագիտությունների կրթական ծրագրերը համապատասխանեցվել են արտասահմանյան բուհերի նմանատիպ կրթական ծրագրերին, ինչը մեծապես նպաստում է ուսանողների և դասավանդողների փոխանակմանն ու շարժունությանը: Փոխանակման ժամանակ ձեռք բերված կրեդիտները պահպանվում են:

Ներկայումս մյուս մասնագիտությունների շրջանակներում ևս իրականացվում են միջոցառումներ տեղական և արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ համարժեք կրթական ծրագրերի ստեղծման ուղղությամբ: ԵՃՇՊՀ-ն 13 օտարերկրյա բուհերի հետ կնքել է համաձայնագրեր ուսանողների և դասավանդողների փոխանակման և շարժունության մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարելի է փաստել, որ կան գործընթացներ, սակայն թերի են կանոնակարգող փաստաթղթերը: **Չափանիշ 7-ը մասամբ է համապատասխանում ներկայացվող պահանջներին:**

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

7.1. մշակել դասավանդման նյութերի և ռեսուրսների առկա վիճակի գնահատման մեխանիզմները, դրա իրականացման պարբերականությունը և գնահատման չափանիշները;

7.2. մշակել և հաստատել արտաքին շահակիցների կարծիքների և կարիքների ուսումնասիրման մեխանիզմները;

7.3. մշակել և հաստատել կրթական ծրագրերի տարեկան մշտադիտարկման և պարբերաբար վերանայման քաղաքականություն և ընթացակարգեր՝ դրանց իրականացման արդյունավետությունը գնահատելու համար;

7.4. վերանայել գնահատման համակարգը՝ նպատակաուղղելով այն.

- *գնահատելու ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանությունը դասընթացի կամ կրթական ծրագրի նախանշված կրթական ելքային արդյունքներին,*
- *փաստելու գիտելիքների , կարողությունների և հմտությունների այն մակարդակը, որը ուսումնառողները ձեռք են բերել ուսումնառության ընթացքում;*

7.5. մշակել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմները:

8. Հետազոտություն և զարգացում

ՉԱՓԱՆԻՇ 8. *ՄՈՒՀ-ը նպաստում է հետազոտական նպատակների, նախագծերի իրականացմանը և ապահովում ակնկալվող արդյունքները: Առկա են հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմներ:*

ՉԱՓԱՆԻՇԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԵՃՇՊՀ-ն իր ռազմավարության մեջ կարևորում է հիմնարար և կիրառական հետազոտությունները որպես բարձր ինտելեկտուալ մակարդակի հաղորդակցության մթնոլորտի ստեղծման աղբյուր, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների վերլուծական ու քննադատական մտածողության, հմտությունների ու ունակությունների զարգացման խթան: Ըստ ԵՃՇՊՀ-ի գիտական ոլորտի հետազոտությունների ռազմավարության գերակա ուղղություններն են.

1) ճարտարապետության տեսություն և պատմություն.
2) ճարտարապետական հուշարձանների վերականգնում.
3) շենքերի և կառույցների ճարտարապետություն.
4) քաղաքաշինություն, լանդշաֆտային ճարտարապետություն.
5) կամուրջներ և տրանսպորտային թունելներ.
6) հիդրոտեխնիկական և մելիորատիվ շինարարություն.
7) արդյունաբերական և քաղաքացիական շինարարության տեխնոլոգիա և կազմակերպում.
8) ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն.
9) ճանապարհային երթևեկության կազմակերպում:

Հետազոտական ոլորտում ռազմավարության ծրագրի իրականացման կարճաժամկետ ծրագրերը ԵՃՇՊՀ-ի կողմից ճանաչվում են ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմաները, իսկ միջնաժամկետ՝ ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման բազային ֆինանսավորման ծրագրերը:

ԵՃՇՊՀ-ը հետազոտական և նորարարական աշխատանքներին նպաստող քաղաքականությունները և ընթացակարգերը համակարգվում են ՀՀ Կառավարության և այլ պետական գերատեսչական կառույցների կողմից հաստատված կարգերով և քաղաքականությամբ:

Ակադեմիական ազնվության մթնոլորտ ապահովելու համար համալսարանը մեծ ուշադրություն է դարձնում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանը, որտեղ ուսանողական խորհրդի անդամները ևս ներգրավվում են որոշումների կայացման գործընթացում: Սակայն, այդ քայլերը միայն հատվածական են հասցեագրում ակադեմիական ազնվության խնդիրը և չկա համակողմանի քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք կնպաստեն դասավանդողի և ուսումնառողի իրավունքների և պարտականությունների կատարմանը, որակյալ հետազոտությունների իրականացմանը: Այցի ընթացքում բացահայտվեց, որ համալսարանի կառավարման օղակներում գրագողության *երևույթի դեմ պայքարի հստակ պատկերացում չկա:*

ԵՃՇՊՀ-ն ակտիվ գործունեություն է ծավալում միջազգային համագործակցության ոլորտում՝ կնքելով 17 երկկողմ և 5 եռակողմ պայմանագրեր եվրոպական և ասիական համալսարանների հետ՝ ուսանողների և դասավանդողների փորձի փոխանակման, համատեղ հետազոտությունների իրականացման, ուսանողների փոխանակման նպատակով: Հանդիպումները փաստեցին, որ ԵՃՇՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմը, երիտասարդ դասախոսները և գիտաշխատողները ակտիվ մասնակցություն են ունեցել միջազգային տարբեր ծրագրերին, սեմինարներին և գիտաժողովներին:

Համալսարանն ակտիվ գործունեություն է ծավալում միջազգայնացման ուղղությամբ՝ խթանում է իր դասավանդողներին և սովորողներին մասնակցելու բազմաբնույթ միջոցառումներին, *սակայն այդ գործընթացները դեռևս կանոնակարգված չեն:*
ԵՃՇՊՀ-ում, որպես ուսումնական գործընթացի և հետազոտությունների փոխկապակցման հիմնական գործիք, դիտարկվում է գիտական հետազոտությունների հիմնական արդյունքների ներառումը դասընթացների ծրագրերի վերանայման կամ նոր դասընթացների մշակման գործընթացում: *Սակայն, այդ գործընթացը կանոնակարգող քաղաքականությունը և ընթացակարգերը մշակված չեն:*
Ինչպես ցույց տվեցին կատարված դիտարկումները ԵՃՇՊՀ-ում հետազոտական գործունեության որակի ապահովման մեխանիզմները պայմանավորված են արտաքին գործոններով, որոնց թվում են պետական մարմինների կողմից վարվող քաղաքականությունը և արտասահմանյան հետազոտական պրակտիկայում ընդունված նորմերը: Համալսարանը հետևողականորեն զարգացնում է իր հետազոտական կարողությունները, ինչն իր դրական ազդեցություն է ունենում գիտահետազոտական գործունեության և մշակումների որակի ապահովման գործում: *Սակայն, տվյալ ուղղությամբ որակի ապահովման պաշտոնապես հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր համալսարանը դեռևս չունի:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Հաշվի առնելով զարգացման դրական միտումները՝ կարելի է փաստել, **որ չափանիշ 8-ը մասամբ է բավարարում** ներկայացվող պահանջներին:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

8.1 մշակել և հաստատել գրագողության դեմ պայքարի քաղաքականությունը և հստակ մեխանիզմները;

8.2. *մշակել և հաստատել հետազոտական գործունության միջազգայնացման ընթացակարգը և մեխանիզմները;*
8.3. մշակել և հաստատել ուսումնական գործընթացի և հետազոտությունների փոխկապակցման քաղաքականությունը և մեխանիզմները;
8.4. մշակել և հաստատել հետազոտական գործունության և մշակումների որակի ապահովման ընթացակարգը և մեխանիզմները:

9. Ենթակառուցվածք և ռեսուրսներ

ՉԱՓԱՆԻՇ 9. *ԵՃՇՊՀ-ի սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման և ուսումնական միջավայրի ստեղծման համար ամրացված անհրաժեշտ ռեսուրսները:*

ՉԱՓԱՆԻՇԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
Ըստ ինքնավերլուծության զեկույցի և այցի դիտարկումների՝ ԵՃՇՊՀ-ը ձգտում է իր առաքելությանն ու նպատակներին համահունչ բաշխել բավարար ֆինանսական ռեսուրսներ: Դրա վկայությունն է ԵՃՇՊՀ-ի վարած քաղաքականությունը՝ ուղղված նյութատեխնիկական բազայի շարունակական արդիականացմանը: Սակայն,

ֆինանսական ռեսուրսների բաշխման արդյունավետության գնահատում համալսարանը չի իրականացրել:

Այցի ընթացքում կատարված դիտարկումները պարզեցին, որ ԵՃՇՊՀ-ի կրթական ծրագրերն հիմնականում ապահովված են ժամանակակից նյութատեխնիկական բազայով, նորմատիվ-իրավական փաստաթղթերով և մարդկային ռեսուրսներով: Ընդ որում, դրանք շարունակաբար բարելավվում են: Վերջին տարիներին համալսարանի ուսումնական և գիտահետազոտական նպատակների իրականացման համար ստեղծվել են հետևյալ պրոբլեմային լաբորատորիաները՝ ակադեմիկոս Ալ.Թամանյանի անվան ճարտարապետության և շինարարության, ակադեմիկոս Ի.Եղիազարովի անվան ջրային ռեսուրսների կառավարման և համալիր օգտագործման (գործում է Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ուսումնագիտական կենտրոնի կազմում՝ ակադեմիկոս Ի.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտի հետ համատեղ), ակադեմիկոս Ռ.Մովսիսյանի անվան ինժեներական գեոդեզիայի: Արտաքին շահակիցների օժանդակությամբ ՄՈՒՀ-ում ստեղծվել են 6 մասնագիտացված կաբինետ-լսարաններ:

Ռեսուրսների բաշխումը վերանայվում է կրթական ծրագրերի վերանայմանը զուգընթաց, որին մասնակցում է պրոֆեսորադասախոսական կազմը (ամբիոնների նիստերի քննարկումների արդյունքում): Ըստ ինքնավերլուծության ռեսուրսների՝ բաշխման գործընթացում հաշվի են առնվում ՄԿԾ-երի իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումների կարծիքները և ուսանողների արձագանքները:

Սակայն, այցի ընթացքում այս հարցը մանրամասնորեն քննարկվեց բոլոր հանդիպումների ժամանակ և պարզաբանվեց, որ ուսանողների շրջանում կարծիքները կիսվեցին. շատերը գտնում էին, որ հնարավորինս բավարարվում են իրենց կարիքները, ոմանք էլ տեղեկացված չէին գործընթացից:

ԵՃՇՊՀ-ում *չի իրականացվում ռեսուրսներից ուսումնառողների և դասավանդողների բավարարվածության գնահատում:*

Կրթական ծրագրերի իրականացման և մշտադիտարկման համար համալսարանը *չունի ռեսուրսային բազայի գնահատման գործիքակազմ, ինչպես նաև որակի ապահովման շարունակական բարելավման հստակ քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ:*

Ըստ զեկույցի՝ վերջին տարիներին զգալիորեն հստակեցվել և բարելավվել են տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման մեխանիզմների աշխատանքները: Գործընթացի բարելավմանն են նպաստում փաստաթղթաշրջանառության ստուգումը և ընթացքի հետադարձ կապի կիրառումը: Բացի այդ, գործընթացի արդյունավետությունն ապահովող կարգերը և մեխանիզմները ներկայումս գտնվում են քննարկման և բարելավման փուլում: Այցի ընթացքում կատարված ուսումնասիրությունների հիման վրա կարելի է փաստել, որ նշված հիմնավորումները ամբողջովին համապատասխանում են իրականությանը:

Այցի ընթացքում ռեսուրսների համալիր դիտարկումը հնարավորություն տվեց փաստել, որ ԵՃՇՊՀ-ի ռեսուրսային բազան օժանդակում է մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացմանը: ԵՃՇՊՀ-ում գործում են տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականություն և ընթացակարգ, սակայն դրանք ներկայումս բարելավման փուլում են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները և այցի արդյունքները՝ կարելի է փաստել, որ **չափանիշ 9-ը մասամբ է բավարարում** ներկայացվող պահանջներին:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

9.1. մշակել առաքելությանն ու նպատակներին համահունչ ֆինանսական ռեսուրսների պլանավորման և բաշխման հստակ մեխանիզմը և դրա արդյունավետության գնահատման չափանիշները;
9.2. մշակել և հաստատել ռեսուրսներից ուսումնառողների և դասավանդողների բավարարվածության գնահատման ընթացակարգը և մեխանիզմները;
9.3. մշակել և ներդնել որակի կառավարման գործընթացի գնահատման հիմնավորված գործիքակազմ որակի ամբողջական կառավարման (Total Quality Management) սկզբունքներին համապատասխան:

10. Հասարակական պատասխանատվություն

ՉԱՓԱՆԻՇ 10. *ԵՃՇՊՀ-ը հաշվետու է շահակիցներին, որ իր տրամադրած կրթությունը և օգտագործած ռեսուրսները համապատասխանում են իրենց նպատակներին:*

ՉԱՓԱՆԻՇԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԵՃՇՊՀ-ը՝ ըստ ինքնավերլուծության զեկույցի և այցի արդյունքների, որպես հասարակական պատասխանատվության արդյունավետ իրագործումն ապահովող մեխանիզմ վկայակոչում է ՀՀ Կառավարության կողմից հաստատված կարգերը, ինչպես նաև ԵՃՇՊՀ-ի կնքած երկկողմ և եռակողմ համաձայնագրերը, որոնք խթանում են դասավանդողների և ուսումնառողների ակադեմիական ազատությունը, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցումը: Վերը նշված գործընթացների քաղաքականությունն ու իրականացման ընթացակարգերը պարբերաբար ճշգրտվում և արդիականացվում են:
ԵՃՇՊՀ-ի հասարակության հետ կապերի ձևավորման մեխանիզմները թափանցիկ են, ապահովում են կայուն հետադարձ կապ, առկա է այդ ուղղությամբ հստակ քաղաքականություն, իսկ գործընթացը կայունանալու միտումներ ունի:
Փորձագիտական խմբի այցելության ընթացքում և հանդիպումներում վերոնշյալ հիմքերը հիմնականում հաստատվեցին: Պարզվեց նաև, որ շատ դեպքերում գործատուներն ակտիվորեն ներգրավված են մասնագիտական կրթական ծրագրերի ստեղծման և մշտադիտարկման գործընթացներում:
ԵՃՇՊՀ-ի հաշվետվողականության և կայուն հետադարձ կապի մասին են վկայում նաև հանրապետությունում իրականացվող ճարտարապետական նախագծերում ԵՃՇՊՀ-ի ներգրավվածությունը, ինչի մասին բազմիցս նշվեց տարբեր ֆոկուս խմբերի հետ հանդիպումներում /գրեթե բոլոր/ և բազմաթիվ փաստաթղթերի դիտարկումներով:
Որպես կայուն և գործող հետադարձ կապի մեխանիզմ կարելի է մատնանշել ԵՃՇՊՀ-ի գործունեության տարբեր ոլորտները լուսաբանող հրատարակած պարբերականների առկայությունը և թերթի անվճար տրամադրումը, 1000 տպաքանակով, որտեղ մանրամասնորեն ներկայացվում են ԵՃՇՊՀ-ի ձեռքբերումները, ինչպես նաև բացթողումների վերացմանն ուղղված քայլերը:

Ըստ ինքնավերլուծության զեկույցի և այցի դիտարկումների հասարակության հետ կապերը ԵՃՇՊՀ-ն իրականացնում է տարբեր ուղղություններով՝ շահագրգիռ կազմակերպությունների մասնագետների վերապատրաստման և որակի բարձրացման հաստատված ծրագրերով, այնպես էլ հասարակության ներկայացուցիչների՝ դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար ք. Երևանում և ՀՀ տարբեր մարզերում կազմակերպված հանդիպումներում և մասնագիտական պարապմունքներում: Կատարված գործընթացի հաշվետվողականությունն իրականացվում է դասընթացի ավարտին անցկացրած ստուգումների արդյունքների ամփոփմամբ և մասնակիցներին համապատասխան վկայականների հանձնմամբ: *Սակայն համալսարանը չի իրականացրել վերոնշյալ գործընթացների արդյունավետության գնահատում և արդյունքների վերլուծություն՝ նպատակ ունենալով բարելավել դրանք:*

Փորձագիտական խումբը հանդիպումների ընթացքում պարզեց, որ ԵՃՇՊՀ-ը փաստացի վարում է քաղաքականություն խոշոր ճարտարապետական և շինարարական նախագծերում մասնակցության և հասարակությանը նման ծառայություններ տրամադրելու հարցում:

ՄՈՒՀ-ում հասարակությանը գիտելիքների փոխանցման գործող մեխանիզմներից են՝ մասնագիտական կողմնորոշման հանդիպումները, զրույցները, վերապատրաստման դասընթացները, անցկացվող լրացուցիչ խորհրդատվությունները, գիտելիքների տարածման համար նախատեսված PR և համալսարանի կայքում տեղադրված համապատասխան նյութերը և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև կայուն զարգացման միտումները և առկա գործընթացները, **չափանիշ 10-ը մասամբ է բավարարում** ներկայացվող պահանջներին:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ:

1. Մշակել և հաստատել հասարակության հետ կապի իրականացման քաղաքանությունը, ինչպես նաև կանոնակարգել հասարակությանը արժեքների փոխանցման գործող մեխանիզմները:

2. Մշակել և հաստատել հասարակության հետ կապի քաղաքականության արդյունավետության գնահատման գործիքակազմը:

Էդուարդ Հակոբյան, ղեկավար

Նահիտ Ութմազյան, համակարգող

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	ՄԱՍԱՄԲ Է ԲԱՎԱՐԱՐՈՒՄ
2. Կառավարում և վարչարարություն	ՄԱՍԱՄԲ Է ԲԱՎԱՐԱՐՈՒՄ
3. Որակի ներքին ապահովման համակարգ	ՄԱՍԱՄԲ Է ԲԱՎԱՐԱՐՈՒՄ
4. Արտաքին կապեր եվ միջազգայնացում	ՄԱՍԱՄԲ Է ԲԱՎԱՐԱՐՈՒՄ
5. Ուսումնառողներ	ՄԱՍԱՄԲ Է ԲԱՎԱՐԱՐՈՒՄ
6. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը	ՄԱՍԱՄԲ Է ԲԱՎԱՐԱՐՈՒՄ
7. Մասնագիտության կրթական ծրագրեր	ՄԱՍԱՄԲ Է ԲԱՎԱՐԱՐՈՒՄ
8. Հետազոտում եվ զարգացում	ՄԱՍԱՄԲ Է ԲԱՎԱՐԱՐՈՒՄ
9. Ենթակառուցվածքներ եվ ռեսուրսներ	ՄԱՍԱՄԲ Է ԲԱՎԱՐԱՐՈՒՄ
10. Հասարակական պատասխանատվություն	ՄԱՍԱՄԲ Է ԲԱՎԱՐԱՐՈՒՄ

Հավելված 1

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Էդուարդ Հակոբյան: Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ: 2003 թ. Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի «Արտադրական գործընթացների, տեղակայանքների ավտոմատացում և էլեկտրաբանեցում» ամբիոնի վարիչ: Մասնակցել է միջազգային մի շարք նախագծերի նվիրված որակի ապահովման հարցերին, այդ թվում Հայաստանի բուհերում ENQA ստանդարտների շրջանակում ներբուհական որակի ապահովման համակարգի ներդրում, Հայաստանում ECTS հենքով ARMCREDIT համակարգի ներդրմանը, ներբուհական որակի ապահովման մեխանիզմների մշակմանը և այլն: Ավելի քան 40 գիտական հոդվածների հեղինակ է:

Ռիչարդ Լուիս: Դոկտոր, Նյու-Յորքի պետական համալսարանի: Եղել է Բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (INQAAHE) նախագահ: Նրա հետաքրքրությունների շրջանակն են որակի ապահովումը, միջսահմանային բարձրագույն կրթությունը և ինստիտուցիոնալ կառավարումը: Լինելով Բարձրագույն կրթության հետազոտության և տեղեկատվության կենտրոնի (CHERI) համաղեկավար՝ Բաց համալսարանից հեռանալուց հետո ավելի քան 30 երկրներում ծավալել է խորհրդատվական և համապատասխան այլ գործունեություն: 2008 թ.-ից Բրիտանիայի հավատարմագրման խորհրդի անդամ, 2011 թ.-ից Բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (INQAAHE) գանձապահ և խորհրդի անդամ:

Վահան Սարգսյան: Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայի վարիչ: 2 գիտամեթոդական ձեռնարկների և 15 գիտական հոդվածների հեղինակ է:

Տիգրան Թովմասյան: Մասաչուսեթսի համալսարան. Կրթության դպրոց, միջազգային կրթության մագիստրոս: UNISEF Հայաստան կրթական ծրագրերի ղեկավար: Անցել է մի շարք մասնագիտական վերապատրաստումներ տարբեր միջազգային կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում: Մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների և կոնֆերանսների:

Արևիկ Օհանյան: Հայաստանում ամերիկյան համալսարան, գործարար կառավարում, մագիստրոս (MBA), «Երիտասարդ դասախոսների վերապատրաստման ծրագիր»՝ ԱՄՆ-ի Պետքարտուղարության կրթական և մշակութային գործերի բաժնի հովանավորությամբ իրականացնում է «Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդներ» կազմակերպությունը, Միջազգային կրթության կենտրոն (CIHE) Բոստոն քոլեջ, գիտայցելու կրթության ադմինիստրացիայի ոլորտում: 2008 թ.-ից Եվրասիա միջազգային համալսարանի որակի ապահովման կենտրոնի ղեկավար: Մասնակցել է մի շարք միջազգային համաժողովների:

Հավելված 2

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Որակի արտաքին գնահատման փորձագիտական խմբի հնգօրյա այցի

Երևանի ճարտարապետության և
շինարարության պետական համալսարան 31.10.2011թ. – 04.11.2011 թ.

31.10.2011թ.

		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Փորձագիտական խմբի հանդիպում ՈԱԱԿ-ում	9:00	12:30	210 րոպե
2	Ընդմիջում	12:35	13:15	40 րոպե
3	Հանդիպում ռեկտորի հետ	14:00	14:30	30 րոպե
4	Հանդիպում ինքնավերլուծությունը իրականացրած աշխատանքային խմբի հետ	14:45	16:15	90 րոպե
5	Ռեսուրսների դիտարկում (մասնաշենք 1)	16:30	18:00	90 րոպե
	Լսարանային ֆոնդ Լաբորատորիաներ և մասնագիտական կաբինետներ			
	Գրադարան, Մարզադահլիճներ և մարզադաշտեր			

01.11.2011թ.

		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում ուսանողների հետ Ֆոկուս խմբային քննարկումներ 7-8 ուսանող	9:30	11:00	90 րոպե
2	Հանդիպում դասախոսների հետ Ֆոկուս խմբային քննարկումներ 7-8 դասախոս	11:30	13:00	90 րոպե
3	Ընդմիջում (փորձաքննության խմբի քննարկումներ)	13:30	14:30	60 րոպե
4	Հանդիպում ամբիոնների վարիչների և դեկանների հետ /Ֆոկուս խմբային քննարկումներ7-8 ամբիոնի վարիչ/	14:45	16:15	90 րոպե
5	Ռեսուրսների դիտարկում (մասնաշենք 2,3)	16:30	18:00	90 րոպե
	Լսարանային ֆոնդ, լաբորատորիաներ և մասնագիտական կաբինետներ			
	Գրադարան, մարզադահլիճներ և մարզադաշտ			

02.11.2011թ.

		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն

1	Հանդիպում վարչական անձնակազմի հետ Այդ թվում դեկաններ	9:30	11:00	90 րոպե
2	Հանդիպում ռեկտորի հետ	11:30	13:00	90 րոպե
3	Ընդմիջում (փորձաքննության խմբի քննարկումներ)	13:15	14:15	60 րոպե
4	Փաստաթղթերի ուսումնասիրություն	14:30	18:00	210 րոպե

03.11.2011թ.

		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում փորձագետների կողմից ընտրված կազմի հետ	9:30	11:00	90 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն	11:15	12:45	90 րոպե
3	Ընդմիջում (փորձաքննության խմբի քննարկումներ)	13:00	14:00	60 րոպե
4	Անհատական հանդիպումներ	14:15	16:00	105 րոպե
5	Փորձաքննության խմբի քննարկումներ	16:30	18:00	90 րոպե

04.11.2011թ.

		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում փորձագետների կողմից ընտրված կազմի հետ	9:30	11:00	90 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն	11:15	12:45	90 րոպե
3	Ընդմիջում (փորձաքննության խմբի քննարկումներ)	13:00	14:00	60 րոպե
4	Հանդիպում վարչական անձնակազմի հետ	14:15	16:00	105 րոպե
5	Փորձաքննության խմբի քննարկումներ	16:15	16:45	30 րոպե
6	Հանդիպում ռեկտորի հետ	17:00	17:30	30 րոպե

«Սասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի
Տնօրեն Ռ. Թուխյան

Երևանի ճարտարապետության շինարարության պետական համալսարանի
Ռեկտոր Գ. Թարմաջյան

Հավելված 3

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

1. ՄՈՒՀ-ի ռազմավարության գնահատման և վերանայման քաղաքականությունը
2. ՄԿԾ-ների մշակման , հաստատման, գնահատման, մշտադիտարկման և վերանայման քաղաքականությունը և ընթացակարգերը:
3. Գնահատման չափանիշները և դրանց վերանայման քաղաքականությունը
4. Պրոֆեսորադասախոսական կազմ
5. Ուսումնական պլաններ
6. Առարկայական ծրագրեր
7. Լաբորատոր և գործնական աշխատանքների նկարագրություններ
8. Ամբիոնի աշխատանքային պլան
9. Ամբիոնի նիստերի արձանագրություններ
10. Ամբիոնի վարիչի կիսամյակային և տարեկան հաշվետվությունները
11. Ամբիոնի թափուր պաշտոնների և դասախոսների ընտրության կարգը
12. Բակալավրի կուրսային և ավարտական աշխատանքներ, մագիստրական և ասպիրանտական թեզեր
13. Ավարտական աշխատանքներին և մագիստրոսական ատենախոսություններին ներկայացվող պահանջները
14. Ուսումնական և մանկավարժական պրակտիկաների անցկացման կարգը
15. Պրակտիկաների հաշվետվությունները և օրակարգը
16. Դասախոսների գնահատմանը վերաբերող լրացված հարցաթերթեր
17. Կրթական ծրագրերի և առարկայական ծրագրերի վերանայման քաղաքականություն
18. Ներքին աուդիտի հաշվետվություն
19. Վերապատրաստման ծրագրերը

Հավելված 4

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՅՑԵՐԸ

1. 1-ին մասնաշենք լսարաններ, գրադարան, մարզադահլիճ
2. Նոր Նորքի V զանգվածի 2-րդ մասնաշենք՝ ԵՃՇՊՔոլեջ
3. Նորք-Մարաշում գտնվող 3-րդ մասնաշենք
4. Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի լաբորատորիա
5. ջերմագազամատակարարման լաբորատորիա
6. Համակարգչային նախագծման ֆակուլտետ
7. Համակարգչային նախագծման մասնագիտացված լսարան
8. "Էկոնոմիկա և կառավարում" ամբիոն
9. գազամատակարարման ամբիոն
10. "Քաղաքաշինության"ամբիոն
11. "Ճարտարապետության տեսության, հուշարձանների վերակառուցման, գեղեցիկ արվեստների և պատմության" ամբիոն
12. Ուսումնագիտական կենտրոն
13. Լսարաններ
14. Գրադարան
15. Մարզադահլիճ
16. Հանրակացարան